Գիտաժողովի հրավեր

Կիլիկիան և կիլիկիահայությունը Հայոց ցեղասպանության տարիներին

Գիտաժողովը նվիրվում է 1920-21 թթ. Կիլիկիայի ինքնապաշտպանական մարտերի հարյուրամյա տարելիցին

Գիտաժողովի օրերը՝ ապրիլի 16-17, 2020 թ.

Գիտաժողովի վայրը՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, Հայաստան

Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափերին գտնվող Կիլիկիան հայկական պատմության և մշակույթի կարևոր կենտրոններից է, որտեղ 1080-1375 թթ. իշխել է Կիլիկյան Հայաստանը: Պետականության կորստից և 16-րդ դարում երկրամասը՝ թուրքերի կողմից զավթվելուց հետո էլ հայերը շարունակել են նշանակալի ներկայություն պահպանել այդ երկրամասում:

Հայոց ցեղասպանության տարիներին կիլիկիահայությունը կիսել է արևմտահայության ճակատագիրը՝ ենթարկվելով տեղահանության և կոտորածի: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ցեղասպանությունից մազապուրծ եղած կիլիկիահայերը սկսում են վերադառնալ հայրենիք: Միաժամանակ հայկական հասարակական-քաղաքական շրջանակները հույսեր էին փայփայում Կիլիկիան ներառել ապագա միացյալ հայկական պետության կազմում կամ ֆրանսիական ընդհանուր հովանու ներքո ստեղծել հայկական ինքնավարություն:

Օգտվելով ֆրանսիացիների ոչ վճռական կեցվածքից՝ 1920 թ. սկզբին քեմալական զորքերը գրոհել են Կիլիկիան: Թուրքական գրոհի առջև պատնեշ են փորձել ստեղծել հայերը՝ ինքնապաշտպական մարտեր ծավալելով Մարաշում (1920 թ. հունվար-փետրվար), Հաճընում (1920 թ. փետրվար-հոկտեմբեր), Այնթապում (1920 թ. ապրիլ - 1921 թ. փետրվար) և այլուր:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված թուրք-ֆրանսիական պայմանագրով Կիլիկիան վերջնականապես հանձնվում է քեմալական Թուրքիային. թուրքական յաթաղանից փրկված կիլիկիահայության մնացորդները հեռանում են հայրենի երկրից:

Չնայած նրան, որ Առաջին աշխարհամարտից հետո՝ 1918-1921 թթ., Հայրենիքի համար կիլիկիահայության պայքարն ի վերջո անհաջողության է մատնվել, այն Հայոց ցեղասպանության ընթացքում հայկական դիմադրության կարևոր դրվագներից է՝ այդ առումով արժանի առավել խորը և համապարփակ գիտական ուսումնասիրության և հանրային լուսաբանման:

Նշված նպատակով «Հայոց ցեղասպանություն թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը 2020 թ. ապրիլի 16-17-ին կազմակերպում է «**Կիլիկիան և կիլիկիահայությունը Հայոց ցեղասպանության տարիներին**» խորագրով գիտաժողով, որը նվիրված է Կիլիկիայի ինքնապաշտպանական մարտերի հարյուրամյա տարելիցին:

Գիտաժողովին ներկայացվելիք զեկուցումները պետք է վերաբերեն (սակայն չսահմանափակվեն) հետևյալ թեմաներին.

- Կիլիկիահայությունն Առաջին աշխարհամարտի նախօրյակին և պատերազմի ընթացքում,
- Կիլիկիայի ժողովրդագրությունը, կիլիկիահայության թիվը Առաջին աշխարհամարտից առաջ և հետո.
- Դեպի Կիլիկիա հայերի հայրենադարձության գործընթացը 1918-1919 թթ.,
- Կիլիկիայի կարգավիճակի շուրջ դիվանագիտական գործընթացները 1918-1921 թթ. (Վերսալի գագաթնաժողով, Հայ ազգային պատվիրակության գործունեություն, հայ-ֆրանսիական, թուրք-ֆրանսիական բանակցություններ և այլն),
- Կիլիկիայում հայերի ինքնակազմակերպումը. հայկական ինքնավարություն հաստատելու փորձը 1920 թ.,
- Կիլիկիահայության ինքնապաշտպանական մարտերը (Մարաշ, Հաճըն, Այնթապ, և այլն), կոտորածները. Կիլիկիայում Հայկական լեգեոնի գործունեությունը,
- Կիլիկիայում ֆրանսիական վարչության գործունեությունը. կիլիկիահայություն-ֆրանսիական վարչություն փոխհարաբերությունները, Կիլիկիայի հայաթափումը

- Կիլիկիահայության սոցիալ-տնտեսական, կրթական և մշակութային կյանքը 1919-1921 թթ.:

Գիտաժողովը բաց է հետազոտողների լայն շրջանակի համար:

Գիտաժողովի հայտերը պետք է ներկայացնել մինչև **2019 թ. հունվարի 31-ը**: Ընտրված մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի 2020 թ. փետրվարի սկզբին: Ներկայացվող հայտերը պետք է ընդգրկեն ամփոփում՝ 200-250 բառ, և հեղինակի համառոտ գիտական ինքնակենսագրությունը (CV):

Դիմումները պետք է ուղարկվեն կազմակերպչական հանձնաժողովին հետևյալ էլ. հասցեով՝ cilicia100@genocide-museum.am :

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը և անգլերենը:

Գիտաժողովն առանց մասնակցության վճարի է: